

Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, Խաչատուր Աբովյան: Կյանք, գործեր, ժամանակը (1809—1836): Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, 798 էջ, գինը 2 ռ. 85 կ.:

Աբովյանագիտությունը հայ դասական գրողների մասին ստեղծված գրականության ամենահարուստ բաժիններից մեկն է: Մեր նոր գրականության «բուր սկիզբների սկիզբը» միշտ եղել է գրականագիտական մտքի ուշադրության կենտրոնում, որովհետև գեղարվեստական զարգացման ինչ հարցի էլ որ մենք դիմենք, այն ուղղակի թե անուղղակի կապվում է Աբովյանի գործի և անվան հետ: Եթե մի կողմ թողնենք նախահեղափոխական տարիներին աբովյանագիտության զարգացման պատմությունը իր վերելքներով և ընդհատումներով, իր լույսով և ստվերով, ապա խորհրդային տարիներին Աբովյանի նոր ըմբռնման, նրա ժառանգության լայն գիտական հետազոտության հիմքերը դրվեցին 30-ական թթ.: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ նոր ըմբռնման առաջամարտիկները եղան մեր գրականության երկու խոշորագույն սյուները՝ Ակսել Բակունցն ու Նդիշե Չարենցը: Առաջինը իր հայտնի գրքույկով («Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը», 1932) և Աբովյանի կյանքը պատկերող անգլագական վեպի հատվածներով (1934), իսկ երկրորդը՝ «Դեպի լյառը Մասիս» սքանչելի պոեմով (1933) ասես կանխագծեցին այն ուղին, որով պիտի ընթանար աբովյանագիտությունը՝ սկսած 30-ական թթ. վերջից: Անցած երեք տասնամյակի ընթացքում բազմաթիվ նոր հետազոտություններով ու հրապարակումներով հաստատվեցին ու խորացվեցին Չարենցի և Բակունցի կռահումները մեծ գրողի և լուսավորչի պատմական դերի, աշխարհայացքի, ժամանակի հետ նրա կապերի և կոնֆլիկտների մասին:

Իհարկե, մեր գիտության այս բնագավառում էլ «ամեն ինչ հարթ չէ»: Աբովյանին էլ վերագրվել են նրա հետ ըստ էության ոչ մի կապ չունեցող հորինվածքներ, կատարվել են անհիմն, հակագիտական «եզրահանգումներ»: Ըստ երևույթին «բարի մտադրությամբ», Աբովյանը երբեմն այնքան է կտրվում իր ժամանակից, ենթարկվում այնպիսի հակապատմական ձեափոխությունների, որ «գրվատական խոսքը» օբյեկտիվորեն վերածվում է ծաղրանկարի:

Այս պայմաններում ավելի է ընդգծվում Պ. Հակոբյանի մենագրության նշանակությունը: Սա ոչ թե մի նոր «հերթական գիրք» է Աբովյանի մասին, այլ գիտության այս ճյուղի ավելի քան հարյուրամյա ուղին հանրագումարի բերող և նոր աստիճանի բարձրացնող մի աշխատություն:

Մանր ու երկարատև, հետևողական և նպատակասլաց աշխատանքի արդյունք է գրախոսվող գիրքը: Գրականագետի ամբողջ նախընթաց ուղին՝ մոտ երկու տասնամյակ, նվիրված է եղել հայ նոր գրականության հիմնադրի կյանքի և գրական ժառանգության, նրա դարաշրջանի և շրջապատի ուսումնասիրությանը: Այդ գործին նա ձեռնարկել է 50-ական թթ. սկզբին, երբ տարբեր հետազոտողների, մասնավորապես Ե. Շահագիրզի ջանքերով լույս աշխարհ էին հանվել մեծ լուսավորչին և գրողին վերաբերող բազմաթիվ անհայտ նյութեր, երբ սկսվել էր Աբովյանի երկերի առաջին ակադեմիական հրատարակությունը: Շատերին այն ժամանակ թվում էր, թե դժվար է որևէ լուրջ բան ավելացնել առկա նյութերի վրա, և աբովյանագիտության հետագա զարգացումը կարող է ընթանալ միայն նոր մեկնաբանությունների ու վերլուծումների ճանապարհով: Պ. Հակոբյանն իր անխոնջ որոնումներով և գյուտերով արմատապես հերքեց այդ պատկերացումները: Երևանի ու Թբիլիսիի, Տարսուի և Լենինգրադի, Մոսկվայի և ուրիշ քաղաքների արխիվներում, թանգարաններում, անձնական հավաքածուներում կատարած մանրակրկիտ աշխատանքը, հայերեն, գերմաներեն ու ռուսերեն հարյուրավոր տպագիր ու ձեռագիր գրքերի, ժամանակի պարբերական մամուլի, հազարավոր նամակների, օրագրերի, պաշտոնական գրությունների ուսումնասիրությունը անսպասելիորեն «առատ բերք» տվեցին: Հետազոտողը շրջանառության մեջ դրեց մեծ թվով նոր վավերագրեր, գեղարվեստական երկեր, հոգվածներ, նամակներ, որոնք կկազմեն մի քանի ստվար հատոր: Այսպիսով, նա խոշոր չափով ընդլայնեց աբովյանագիտության փաստական հիմքը: Դրանից հետո միայն Պ. Հակոբյանը ձեռնարկեց Աբովյանի կյանքին ու ժառանգ-

պոթյանը նվիրված երկհատուր մենագրությունը գրելու գործին։ Այդ մենագրության առաջին հատորն ընդգրկում է Արովյանի կյանքի առաջին քսանյոթ տարիները (1809—1836), իսկ հաջորդ տասնմեկ տարիների պատմությունը (1837—1848) կկազմի աշխատության երկրորդ հատորը։ Առանց ճշմարտության դեմ մեղանշած լինելու կարելի է ասել, որ հայ դասական գրողներին նվիրված և ոչ մի ուսումնասիրություն, բացի սկադ. Ա. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» գրքից, չի ստեղծվել այսքան մանրակրկիտ հետազոտությունից հետո և այսքան հարուստ, ամուր փաստական հիմքի վրա։

Իր բնույթով գրախուժող գիրքը պատկանում է գրականագիտական հետազոտությունների այն տեսակին, որն ընդունված է կոչել գրողի գիտական կենսագրություն։ Մեր գրականագիտության մեջ հետազոտության այդ ձևը գուրս բերվեց նեղ կենսագրական շրջանակներից և ստացավ մեծ կշիռ ու հնչեղություն։ Ուշագրության կենտրոնում պահելով գրողի կյանքի ուղին և հանգամանքները, այդ կարգի գրքերի մեջ հետազոտողները կյանքից զնում են դեպի գրողի ստեղծագործության հիմնական միտումների, գեպի դարաշրջանի հետ նրա բազմազան կապերի բացահայտում։ Ռուս գրականագիտության այդպիսի աշխատություններից, որոնք լայն ճանաչում են գտել, կարելի է հիշատակել Բելինսկուն, Սալ-սիկով-Շչեդրինին, Նեկրասովին, Գորկուն նվիրված գրքերը։ Իրենց շատ կողմերով այս գրականագիտական տեսակին են պատկանում նաև Բ. Անդրոնիկովի գրքերը Լեոմոնտովի մասին, թեև դրանք յուրահատուկ մի շարք գծերի շնորհիվ ստանում են բոլորովին ինքնատիպ բնույթ (գեղարվեստական հատկանիշների ընդգծում, հետազոտության բուն ընթացքի բացառիկ հետաքրքիր, դետեկտիվ գրավչության հասնող նրկարողություն և այլն)։

Գրախոսվող աշխատությունը փաստորեն այդպիսի առաջին ամբողջական գործն է հայ գրականագիտության մեջ, որին, պետք է հուսալ, ապագայում կհետևեն մեր մյուս կլասիկներին նվիրված համանման գրքեր։

Որքան էլ հարուստ լինեն պահպանված նյութերը, Արովյանի կարևորագույն կյանքը մնում է լեցուն բազմաթիվ առեղծվածներով՝ սկսած ծննդյան թվականից մինչև ողբերգական «անհայտ բացակայումը»։ Քանի՜ սիրուն դերի, ինչ-չա՜ն հետազոտողների են հուզել այդ առեղծվածները, ինչպիսի՜ տարբեր ու հակասական վարկածներ են առաջ քաշվել։ Պ. Հակոբյանը, անդրադարձել է այդ բոլոր խնդիրներին, քայլ առ քայլ հետևել հարցի պատմությանը և մոտ մասամբ հասել է նոր ու համոզիչ եզրահանգումների։ Նրա գիտական ուժի հիմնական արժանիք-

ներից մեկն այն է, որ նա բաց չի թողնում ոչ մի առկա փաստ կամ վկայություն, քննության նժարի վրա է դնում բոլոր թեր ու դեմ կարծիքները և միայն նրանց բազմակողմանի վերլուծությունից հետո հանգում է այս կամ այն հետևության։ Արդեն գրքի առաջին գլխում, Արովյանի նախորդների պատմությունը շարադրելիս, հետազոտողը բազմաթիվ մատենագիտական տվյալների հիման վրա ապացուցում է այն միտքը, թե մեծ գրողի պապերը Քանաքեռ են գաղթել XVII դարի վերջում Սևոթի Նիժ գավառից, ցույց է տալիս այդ տոհմի ճյուղավորումները Արարատյան երկրում և Արցախում, նրանց ուղին մինչև XIX դարի սկիզբը։ Արդեն այս նախապատմությունը ընթերցողին շատ բանով մոտեցնում է Արովյանի կենսագրության և անձնավորության բարոնմանը։ Հետազոտողի թափած հսկայական ջանքերը, հին գրքերում ու ձեռագրերում, կաթողիկոսական դիվաններում կատարած որոնումները իզուր չեն անցել։ Դրանք լացել են մեծ գրողի հեռավոր շառավիղների պատմությունը, որոնց հետ այնքա՜ն կապված էր, որոնցով այնքա՜ն հպարտանում էր նա։

Կամ վերցնենք Արովյանի ծննդյան թվականի հարցը։ Հայտնի է, որ առաջարկվել են ամենատարբեր թվականներ (1804-ից մինչև 1811) և վեճերին վերջ տալու համար մի որոշ շրջանում պայմանականորեն ընդունվել է 1805 թ. Պ. Հակոբյանը ոչ թե հարում է այդ կարծիքներից մեկին կամ մյուսին, այլ առաջին անգամ մեջտեղ է բերում պահպանված անխտիր բոլոր վկայությունները (թվով 44) և սրանց քննության ճանապարհով հանգում է այժմ արդեն անառարկելի այն հետևության, թե Արովյանի ծննդյան ճիշտ թվականը 1809-ն է։ Ավելին, նա ճշտում է նաև Արովյանի ծննդյան օրը՝ հոկտեմբեր ամիս, մոտավորապես 15-ին։ Ոչ մի կասկած չի կարող լինել, որ առաջներում էլ ոմանց կողմից ընդունված, բայց ոչ մեկի կողմից այսպես լայնորեն չհիմնավորված 1809 թ. այսուհետև պետք է համընդհանուր ճանաչում գտնի, վերջ տալով այս երկարամյա վեճին։

Սակայն սխալ կլիներ կարծել, թե տվյալ դեպքում մենք գործ ունենք սոսկ մի թվականի ճշման հետ, որից վերջին հաշվով որևէ էական բան չի փոխվում։ Սկսելով ծննդյան թվականից, նոր լուծում տալով այդ հարցին, հետազոտողը հիմք է ստեղծում ճշտելու տասնյակ ու հարյուրավոր կենսագրական և այլ բնույթի փաստեր, հետևելու Արովյանի կյանքի հետագա ողջ ընթացքին՝ մանկական տարիները գյուղում և ուսումնասիրությունը էջմիածնում, Ներսիսյան դպրոցում անցկացրած տարիները և Հաղրատի վանքը, նորից էջմիածին, վերելք Արալատի դաճաթը, Դորպատում անցկացրած հինգ ու կես

տարիները և, վերջապես, հայրենիք վերադառնալու երկար ու ձիգ ճանապարհը ուսական կայսրության մի ծայրից մյուսը՝ Դորպատից ու Պետերբուրգից մինչև Թիֆլիս ու Քանաքեռ։ Արժանի կյանքի այս բոլոր փուլերն ու նշանաձողերը այժմ ներկայանում են շատ ավելի հավաստի, ճշտված թվականներով ու փաստերով։ Միայն այդ փաստերի, Արժանի հետ շփված մարդկանց անունների թվարկումը (որոնց կենսագրության և գրողի կյանքում խաղացած իրական դերի ճշտումը առաջին անգամ մեծ մասամբ հենց Պ. Հակոբյանն է կատարում) կգրավեր շատ էջեր։

Գրքի հեղինակը դուրս է գալիս Արժանի կենսագրության շրջանակներից և լայնորեն զծագրում է այն ամբողջ հասարակական միջավայրը, կոնկրետ շրջապատը, ժամանակաշրջանի էական դեպքերը, որոնք ուղեկցել են գրողին նրա կյանքի զանազան փուլերում։ Շատ տպավորիչ է նկարագրված, օրինակ, նահապետական գյուղի կյանքի, կենցաղի ու պատկերացումների, մանկական խաղերի ու ժողովրդական երգերի այն միջավայրը, որ շրջապատել է մանուկ խաչատուրին հայրենի գյուղում և դարձել նրա աշխարհըմբռնումների ձևավորման առաջին ազդակը։ Այդպես էլ ներկայացված են մյուս միջավայրերն ու դեպքերը՝ էջմիածինը, Թիֆլիսն ու Հաղբատը, ուսուպարսկական պատերազմը, նոր նախիջևանը, Դորպատը, Պետերբուրգն ու Մոսկվան։ Այս վայրերում տարբեր շրջանների հետ ունեցած շփումների, ազդեցությունների և ընդհարումների կենդանի նկարագրությամբ հեղինակը քայլ առ քայլ հետևում է ոչ միայն Արժանի կյանքի ժամանակագրությանը, այլև նրա հոգեկան աշխարհի զարգացմանը՝ լուսավորչի, դեմոկրատի և մեծ արվեստագետի կազմավորման ընթացքին։

Այս առումով առանձնանում է հատկապես գրքի ամենամեծ գլուխը՝ «Հոգևոր վերածնունդ», որը նվիրված է Արժանի դորպատյան տարիների մանրակրկիտ քննությանը (1830—1836)։ Համալսարանական միջավայրի, ուսումնառության բնույթի և ընթացքի, այլազան կապերի և ազդեցությունների բազմակողմանի նկարագրությունը մեզ ընդհուպ մոտեցնում է Արժանի հասարակական, մանկավարժական և գեղագիտական ըմբռնումների մեջ կատարված մեծ հեղաշրջման բացահայտմանը, հեղաշրջում, որը շուտով պիտի մարմնավորվեր հայրենի երկրում ծավալած գործունեության մեջ։ Մոտ 300 մեծադիր էջեր զբաղեցնող այս բաժինը ինքնին մի առանձին մենագրություն կարող էր լինել Արժանի կյանքի ուղու ամենաբախտորոշ շրջանի մասին։

Գրքում սփռված են բազմաթիվ սեղմ ու ծավալուն բնութագրականներ կուլտուրական և հասարակական այն գործիչների, որոնք այս կամ այն դերն են խաղացել (դրական կամ բացասական) Արժանի ճակատագրի մեջ։ Ներսես Աշտարակեցի և Պողոս վարդապետ, Հարություն Ալամդարյան, Ֆրիդրիխ և Գեորգ Պարրոտներ, Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդլենդեր և դասընկեր Յոհան Դրաս, Ժուկովսկի և Բուլգարին, Ստ. Նազարյանց և Ստ. Ներսիսյանց, ակադեմիկոս Ֆրեն, Յուլիա և Պաուլ Դալ, Շարլոտե Շուլց (Չարենցի «Դեպի լյաոր Մասիսս պոեմի հերոսուհին») և դորպատյան տարիներին Արժանին զրաված ուրիշ կանայք,—սրանց և շատ ուրիշների բնութագրերը, ավելին՝ երբեմն ուղղակի գեղարվեստորեն զծագրված կերպարները անցնում են մեր աչքերի առաջով։ Գրքերից և արխիվներից Պ. Հակոբյանը քաղել է այն առավելագույնը, ինչ առհասարակ հնարավոր էր քաղել ավելի քան հարյուր տարով մեզանից հեռու այս մարդկանց մասին։

1836 թ. ավարտվող շրջանը Արժանի ստեղծագործական կյանքում դեռևս նախապատրաստական շրջան էր, երբ նրա գրական գործունեությունը հիմնականում սահմանափակվում էր գրաբար բանաստեղծություններով, օրագրերով և պաշտոնական գրություններով։ Բայց գրողի հոգում կուտակվում էին արդեն այն ուժերը, որոնք մի քանի տարի անց պիտի պոռթկային «Վերքի» և մյուս երկերի հրեղեն էջերում։ Ըստ երևույթի, Արժանի ստեղծագործության մասին հիմնական խոսակցությունը թողնելով երկրորդ հատորին, հեղինակը առայժմ համեմատաբար քիչ տեղ է հատկացնում այդ հարցերին։ Սակայն ժամանակագրական հերթականությամբ և սպառիչ գնահատականներով վերլուծվում են Արժանի հիմնական շափածո գործերը, ցույց են տրվում ստեղծագործական այն նախադրյալները և տարրերը, որոնց աստիճանական կուտակումը ի վերջո պետք է հանգեցնի իսկական հեղաշրջման հայ գրականության պատմության մեջ։

Կուլեբինք մի երկու դիտողություն անել հեղինակին, թեև դրանք վերաբերում են մասնակի հարցերի։ Իր ջանքերը նվիրաբերելով Արժանի կյանքի բոլոր մութ կետերը պարզելու նպատակին, հեղինակը երբեմն ընկնում է ավելորդ մանրութների մեջ, զբաղվում է այնպիսի երկրորդական հարցերով, որոնք վերջին հաշվով էական արժեք չունեն Արժանի գիտական կենսագրության համար։ Ահա մի օրինակ. Պ. Հակոբյանը պարզել է Դորպատից Արժանի մեկնելու ճիշտ օրը՝ 1836 թ. հունվարի 18։ Բայց դրանից հետո էլ նա ցանկանում է ժամ առ ժամ ճշտել, թե դրան նախորդած օրերին նա ինչով է

գրադվել: «Ի՞նչ էր անում Արուսյանը հունվարի 14—18 ընկած ժամանակամիջոցում,— հարց է տալիս հեղինակը և պատասխանում:— Այս հարցը տակավին անլուծելի է մնում: Ուղիղ հինգ օր և ծանոթ չէ ոչ մի անցք» (էջ 674): Եվ ահա, ենթադրություններ են արվում այն մասին, թե ինչով կարող էր գրադվել մեկնելու պատրաստվող մարդը, թեև դրանից հետո էլ ցավով նշում է, թե «այնուամենայնիվ մնում է մի բաց տարածություն, որ կարելի է փակել միայն խոհերով» (էջ 675): Կարծում ենք, այդպիսի դեպքերում հեղինակի թափած ջանքերը ավելորդ են. հո պարտադիր չէ՞, որ նշանավոր մարդու կյանքում ամեն օր մի նշանավոր դեպք կատարվի:

Երբ հեղինակն ընթերցողի ուշադրությանն է հանձնում որևէ նոր հայտնաբերված վավերաթուղթ, միանգամայն բնական է, որ նա կարող է և պետք է դիմի նույնիսկ ընդարձակ մեջբերումներ: Բայց երբեմն ավելորդ շափով մեծ քաղվածքներ են արվում նույնիսկ տպագրված և այն էլ ոչ առաջնահերթ նշանակություն ունեցող նյութերից, որոնք խախտում են աշխատության գիտական ոճն ու ուժով: Այսպես, ամբողջ հինգ էջ անընդմեջ քաղվածք է կատարվում Մ. Սալլանյանցի՝ 1831 թ. իս. Արուսյանին դրած նամակներից (էջ 451—456), որոնք վերջին հաշվով շատ էլ կարևոր արժեք չունեն և ժամանակին տպագրվել են Ե. Շահագիզի կազմած «Դիվանում»: Այդ փաստաթղթերի բովանդակության սեղմ շարադրանքն ու գնահատականը սեփական խոսքերով շատ ավելի բան կտային ընթերցողին, քան երկարաշունչ գրաբար հատվածները:

Ընդհանրապես շատ հետևողական ու կուռ տրամաբանությամբ գրված այս գրքում երբեմն հանդիպում են հակասություններ: Այսպես, 199-րդ էջում խոսելով 1824 թ. գրած «Կարօտութիւն նախնի վայելչութեանց Հայրենեաց իմոց» բանաստեղծության մասին, հեղինակը հայտարարում է, թե Արուսյանն այստեղ իրեն դրսևորել է իբրև «արդեն ձևավորված ռոմանտիկ»: Բայց ահա ընդամենը մի քանի էջ անց (213—214), նորից անդրադառնալով առաջին շրջանի արուսյանական պոեզիային, նա ուղղակի գրում է. «Բայց ասել, թե Արուսյանը ձևավորված ռոմանտիկ բանաստեղծ էր այդ ժամանակ, կլինե՞ր մեղանշում ընդդեմ ճշմարտության ու փաստերի: Արուսյանի բանաստեղծական քանքարն իր առաջին ընձյուղներն էր միայն արձակում»: Մենք

համաձայն էնք այս երկրորդ բնագմանը, բայց որ սա ուղղակի հակասում է մեջ բերված նախորդ մտքին, որևէ կասկածից վեր է: Ավելացնենք, ի դեպ, որ իր գրքի հետագա բաժիններում էլ, խոսելով Արուսյանի ավելի ուշ գրված բանաստեղծությունների մասին, Հակոբյանը նրանց մեջ իրավացիորեն տեսնում է դեռ կլասիցիզմի ոճի ազդեցության հետքերը (էջ 339 և 527):

Մի այլ օրինակ. 289-րդ էջում ասվում է, որ 1829 թ. մայիսի 10-ին Արուսյանը էջմիածնում հանդիպել է Թեհրանում սպանված Գրիբոեդովի դիակառքին, բայց հաջորդ իսկ էջի ծանոթագրության մեջ նշվում է. «Գրիբոեդովի դագաղն էջմիածին հասնելու ճիշտ օրը հայտնի չէ. վանքի մատյաններում այդ անցքն արձանագրված է մայիսի 8—17-ի միջև»: Այս երկու պնդումներն հակասությունը նույնպես ակնհայտ է:

526-րդ էջում բերվում է Արուսյանի դորպատյան ընկեր Պաուլ Դալի օրագրում գրի առնված հետևյալ երկտողը՝

Ազատությունն ապրում է միայն երազ
աշխարհում
Եվ գեղեցիկը ծաղկում է միայն երգերում...

Անհետաքրքիր չէ այն փաստը, որ սրանք ոչ թե Պաուլ Դալի ինքնուրույն տողերն են, ինչպես հակված է կարծելու Պ. Հակոբյանը, այլ Շիլլերի «Սուր դարի սկիզբը» բանաստեղծության եզրափակիչ տողերը: Արուսյանի շրջապատում Շիլլերի պաշտամունքի ևս մի վկայություն է սա:

Վերջում չի կարելի հատուկ չխոսել գրքի մի արժանիքի մասին: Խոսքը վերաբերում է աշխատության ոճին, շարադրանքին: Գրքի մեջ նյութին համեմատ կարելի է գտնել ոճի ամենաբազմազան տարրեր ու հատկանիշներ. մերթ այն աչքի է ընկնում արձանագրական հակիրճությամբ ու ճշգրտությամբ, մերթ ազատ է, բուռն ու պատկերավոր, մերթ խոհական է ու լուրջ, մերթ՝ սրամիտ ու խայթող, բայց բոլոր դեպքերում՝ տոգորված ոգևորությամբ ու սիրով դեպի նյութը: Այս արժանիքների շնորհիվ այս ծավալուն գիրքը կարդացվում է հետաքրքրությամբ և հաճախ գեղարվեստական բավականությամբ է պատճառում:

Պրոֆ. է. ԶԻՐԱՇՅԱՆ